**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՄԱՐՏԻ 2021թվականի N 32

## 06-033-0017-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 912- որոշման 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի վարչական տարածքում գտնվող 06-033-0017-0008 ծածկագրի 0.01216 հա բնակավայրերի նշանակության՝ այլ հողամասի և 39.05 քմ շինության նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը համաձայն ներկայացված հատակագծի:
2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ Հօ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3.Շինության գործառնական նշանակությունը փոխել՝ պոմպակայանը դարձնել մառան:
4.Հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի կառուցապատման:
5.Անշարժ գույքին տրամադրել 2 փող, 7/1 փոստային հասցե:
6.Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
7.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմանը սեփականության իրավունքը գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՐՏԻ 2021թվականի N 33

## 06-033-0035-0020 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Արամայիսի Ղազարյանի դիմումը, <<Վանաձորի քիմգործարան>> Բ/Ը սեփականաշնորհման վկայագիրը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ Կառավարության 2001թ-ի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 3-րդ կետի <<է>> ենթակետի պահանջներով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշումով`
Որոշում եմ.

1.Ճանաչել Աշոտ Արամայիսի Ղազարյանի /ծնված 1959թ./, Անիկ Արտավազդի Կռոյանի /ծնված 1962թ./, Վազգեն Աշոտի Ղազարյանի /ծնված 1984թ./, Արամ Աշոտի Ղազարյանի /ծնված 1987թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, իրենց պատկանող 1994թ. կառուցված 49.92 քմ բնակելի տան, 1994թ. կառուցված 24.21 քմ ավտոտնակի, օրինական պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված 0,02897հա հողամասի նկատմամբ:
2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատա-կագծով:
4.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե` 2 փող, 7 նրբ, 42:
5.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ`** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՄԱՐՏԻ 2021թվականի N 34

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով `
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0035-0039 ծածկագրի 0.0749 հա տնամերձ հողամասին և բնակելի քոթեջին տրամադրել 2 փող, 7 նրբ, 4 փոստային հասցեն:
2.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը փոստային հասցեն գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ